

(էջ 251), բայց եւ այնպէս կը հոգան անոնք իրենց զաւակի կրթութեան մասին. Սիմէոն կը գրէ. «Բայց զիս տվեալ յուսումն գրոց, որում հասու եղեալ ի մանկութենէ մինչ ի չափ հասակի հասեալ՝ ղեզերեալ եւ մարդեալ ի վարժարանս ջահաստանի առ ոտս վարդապետաց եւ բանասիրաց» (Ուղ. էջ 1—2) :

Սիմէոն հաւանօրէն նախ աշակերտած էր առ ոտս Յակոբ Թոխաթեցւոյ, ծանօթ քաջագիր գրչի եւ բանաստեղծի, որ 1602էն սկսեալ հաստատուած էր ի Չամոսցա*, եւ ապա ղեզերած առ ոտս «վարդապետաց»: Գրիգոր Կեսարացւոյ, եւ «բանասիրաց», Ագարիա Սանեցւոյ, ի Կ. Պոլիս: Նա ընտրած էր եկեղեցական կոչումը. կը ներկայանայ մեղի իբրեւ դպիր:

Իր քոյրերը ամուսնացած էին արդէն երբ կը վախճանէր հայրը (1605^o): Սիմէոն հայրենի ստացուածքներու ժառանգը կ'ըլլայ. 1619ին կը գրէր թէ «ունէի (ի Չամոսցա) . . . զհայրենի տունս եւ զբնակութիւնս, գտացուածս եւ զայլս» (էջ 349): Բայց հայրենի ժառանգութեան տնտեսութիւնը չի հետաքրքրեր զինքը. եւ ոչ ալ հայրենի օջախը, որ իրմով վառ պիտի մնար: Անիկա կը սիրէր ընթերցանութիւնը եւ հպարտ էր որ գիտէր կարգալ եւ գրել: Ուսած էր վայելուչ նոտրագիր: Իր սիրած ընթերցանութեան

* Յակոբ Թոխաթեցւոյ մասին տես իմ Հինդ սյանդուխա Տաղասացներ, էջ 141—202 եւ Մատենագրական Հետազոտութիւններ, Դ., էջ 1—6: